Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի հետ 03/03/2023 թվականին կնքված Ճանապարհային նշանների տեղադրման գնման թիվ ԵՔ-ՄԱԱՇՁԲ-23/2 պայմանագրի շրջանակներում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանի լուծելը և մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների վերաբերյալ, բավարարել:

1.1. Ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 01.08.2023 թվականի թիվ 1 եզրակացությունը:

1.2. Ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել 03.03.2023 թվականին կնքված Ճանապարհային նշանների տեղադրման գնման թիվ ԵՔ-ՄԱԱՇՁԲ-23/2 պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծելը:

1.3. Ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 09.08.2023 թվականի թիվ 2513-Ա որոշումը «Իմպեքս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության բռնագանձել 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության կողմից ավել վճարված 47.000 ՀՀ դրամ պետական տուրքը ենթակա է վերադարձման հայցվոր «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերությանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**